Հավելված 5
ՀՀ գիտության կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2020 թ. հուլիսի 14-ի N 45-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գիտության քաղաքականության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 18-1-27.1-Մ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին

1.3Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը

1.4 Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Օրբելի եղբայրների 22

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

- մասնակցում է գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ու գիտության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակման և մշտադիտարկման աշխատանքներին.
- մասնակցում է գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է գիտության զարգացման հեռանկարային ծրագրերի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման ժամանակակից համակարգի ձևավորմանն, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին.

- մասնակցում է գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման և դրանք սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատման ներկայացման աշխատանքներին.
- մասնակցում է Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի և Կոմիտեի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է Վարչության իրավասության սահմաններում գիտության մասով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքներին.
- մասնակցում է բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների, այդ թվում՝ նաև երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35տ.) խրախուսման միջոցառման իրականացման աշխատանքներին:

Իրավունքները՝

- համապատասխան մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, նախապատրաստել համապատասխան նախագծեր.
- Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի և Կոմիտեի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի գիտության ոլորտի քաղաքականության մշակման աշխատանքներին մասնակցելու նպատակով համապատասխան ստորաբաժանումներից և գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից և բուհերից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր, հայտեր.
- մասնակցել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների, այդ թվում՝ նաև երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35տ.) խրախուսման մրցույթների կազմակերպման աշխատանքներին.
- նախապատրաստել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկություններ, եզրակացություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ, ինչպես նաև մասնակցել դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքներին:

Պարտականությունները՝

- գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի, գիտության բնագավառի կառուցվածքային բարեփոխումների, գիտության զարգացման հեռանկարային ծրագրերի, գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանն, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման ժամանակակից համակարգի ձևավորմանն, գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված ծրագրերի, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքների շրջանակներում կատարել գիտության բնագավառի միջազգային փորձի ուսումնասիրության, տվյալների հավաքագրման,

վերլուծության, համապատասխան ծրագրերի մշակման, շրջանառման, ստացված կարծիքների ու առաջարկությունների ամփոփման աշխատանքներ և դրանք ներկայացնել Բաժնի պետին.

- Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի և Կոմիտեի միջնաժամկետ ծախսերի ծրագրի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի՝ գիտության ոլորտի քաղաքականության մշակման աշխատանքների մասնակցության գործընթացում հավաքագրել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպություններից և բուհերից ստացված անհրաժեշտ տեղեկատվությունը, փաստաթղթերը, հայտերը, ուսումնասիրել, վերլուծել և դրանք ներկայացնել Բաժնի պետին.
- բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների, այդ թվում՝ նաև երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35տ.) խրախուսման միջոցառման իրականացման աշխատանքների շրջանակում կատարել մրցույթների հրավերի փաթեթի նախապատրաստում և հրապարակում Կոմիտեի պաշտոնական կայքէջում, հայտերի ընդունում, ուսումնասիրություն, վերլուծություն, շտեմարանների ստեղծում և վարում, պայմանագրերի կնքման նախապատրաստում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

1. Ժամանակի կառավարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում
3. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և

մասնագիտական օժանդակության համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: